121

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/99-1

ք. Երևան «22» 08 2019թ.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և « Ֆլեշ Մոտորս » ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Լալայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է մինչև 2 500 000 (Երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է՝ համաձայն N 1.1 հավելվածում սահմանված միավոր առավելագույն գների.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

[illegible] մատուցման՝ պայմանագրի պահանջների

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **17** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ԿԱՏԱՐՈՂ
«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ	«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ, թիվ 3	ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 2473600002170010	Հ/Հ 1510012745550100
ՀՎՀՀ 02205028	ՀՎՀՀ 00873228
Գլխ. տնօրեն----------Ս. Խաչատրյան	Տնօրեն----------Ա. Հալայան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«22» 08 2019թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/99 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի և մատուցվող ծառայությունների միավորի գները ներկայացված են հրավերին կից Հավելվածը 1-ով / Excel տարբերակով/:

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	Ծառայության անվանումը
1	Հունդայի Սոնատա ավտոմեքենա 2հատ (իր մոդիֆիկացիաներով) /մարդատար ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ/
	Հունդայի Էլանտրա ավտոմեքենա 1հատ (իր մոդիֆիկացիաներով) /մարդատար ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ/
	Հունդայի Հ-1 ավտոմեքենա 2հատ (իր մոդիֆիկացիաներով) /մարդատար ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ/

Ծառայությունների մատուցումը կիրականացվի պայմանագրով սահմանված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	Հունդայի Սոնատա ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով) /մարդատար ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ/	Համապատասխան Հունդայի գործարանի կողմից կազմված վերանորոգման և տեխնիկական սպասարկման ուղեցույցի
	Հունդայի Էլանտրա ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով) /մարդատար ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ/	Համապատասխան Հունդայի գործարանի կողմից կազմված վերանորոգման և տեխնիկական սպասարկման ուղեցույցի
	Հունդայի Հ-1 ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով) /մարդատար ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ/	Համապատասխան Հունդայի գործարանի կողմից կազմված վերանորոգման և տեխնիկական սպասարկման ուղեցույցի

Ծանոթություն.

1.Վերանորոգման ծառայությունները կիրականցվեն համապատասխան «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ավտոտնտեսության կողմից տրամադրված կարգագրերի հիման վրա:

2.Վերանորոգման ծառայությունները իրականացնելիս պատասխանատու ստորաբաժանման կողմից կարող են տրամադրվել պահեստամասեր:

3. Հիմնական նորոգում անցած ավտոմեքենաներին և ագրեգատներին /շարժիչ, փոխանցման տուփ, կամրջակ և այլն/ պետք է տրվի շահագործման երաշխիքային ժամկետ 20000 կմ կամ 2 տարի, մինչև պայմաններից որևէ մեկի շուտ լրանալը:

4.Հիմնական նորոգում անցած ագրեգատներին տրված երաշխիքային ժամկետները գործելու են արտադրող

7.Նորոգման ժամանակ փոխարինված ագրեգատները և հանգույցները նորոգող ընկերությունը պարտավոր է հետ վերադարձնել պատասխանատու ստորաբաժանմանը ըստ կարգագրերի:
8.Նորոգումները իրականացվում են ընկերությունների կողմից ներկայացված արատավորման ակտերի հիման վրա՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ավտոտնտեսության կողմից հաստատվելուց հետո:
9.Նորոգող ընկերությունների կողմից մեքենաները կամ ագրեգատները պետք է ընդունվեն փաստացի տեխնիկական վիճակով:
10.Ավտոմեքենաների և ագրեգատների տեղափոխումը մինչև նորոգումը և նորոգումից հետո կատարել «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի միջոցով:
11.Ընկերության կողմից փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված:
12. . Քանի որ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն հանդիսանում է ՀՀ-ում ստրատեգիական նշանակության օբյեկտ, մեքենաների խափանման ժամանակ նրանց վերանորոգումը պետք է իրականացվի անհապաղ/արտահերթ/:

ԳՆՈՐԴ	ԿԱՏԱՐՈՂ
«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ	«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ, թիվ 3	ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 2473600002170010	Հ/Հ 1510012745550100
ՀՎՀՀ 02205028	ՀՎՀՀ 00873228
Գլխ. տնօրեն----------Ս. Խաչատրյան	Տնօրեն----------Ա. Լալայան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԲԱԺԻՆ

Հավելված N 1☐1
«22 » 08 2019թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/99 ծածկագրով պայմանագրի

Հ/Հ	Պահեստամասի կամ ծառայության անվանումը	Չափման միավոր	Տրանսպորտային միջոցի մակնիշը		
			Հունդայի Սոնատա	Հունդայի Էլանտրա	Հունդայի H-1
	Տրանսպորտային միջոցի քանակը	հատ	2	1	2
1 չափաբաժին					
Նախատեսվող առավելագույն գին /ներառյալ ԱԱՀ/ 2 500 000դրամ					
	1.Շարժիչ	Միավոր առավելագույն գին ներառյալ ԱԱՀ (հազ. դրամ)			
1	Շարժիչի հանում և տեղադրում	հատ	60	40	60
2	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	հատ	190	190	190
3	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	հատ	40	40	40
4	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	հատ	40	40	40
5	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	հատ	2	2	2
6	Փականների խցուկների փոխարինում	1 կ-տ	2	2	2
7	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	1 կ-տ	25	25	25
8	Ծնկաձև լիսեռի հղկում	հատ	10	10	10
9	Մխոցի փոխարինում 1 հատ	հատ	10	10	10
10	Փոկանիվի փոխարինում	հատ	15	15	15
11	Շարժիչի շղթայի փոխարինում	հատ	35	35	50
12	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	հատ	10	10	10
13	Շարժիչի կափարիչի	հատ	25	10	25

	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ				
14	Վառոցքի մոմի փոխարինում	1 կ-տ	5	4	5
15	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	հատ	8	8	8
16	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	1 կ-տ	20	10	20
17	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	1 կ-տ	8	4	8
18	Բենզամղիչի փոխարինում	հատ	10	10	10
19	Ձրի խողովակի, փողրակի փոխարինում	հատ	10	6	10
	3. Սառեցման և արտածման համակարգ				
20	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	35	35	40
21	Ռադիատորի նոր ոգում	հատ	10	10	10
22	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	հատ	10	8	8
23	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	հատ	30	30	30
24	Թերմոստատի փոխարինում	հատ	10	8	10
25	Ձրի մղիչի փոխարինում միջադիրով	հատ	25	15	25
26	Ձրի ռադիատորի վերանորոգում	հատ	10	10	10
27	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5	5	5
28	Խլարարի խողովակի փոխարինում	հատ	4	4	4
	4. Կցորդում և ՓՏ				
29	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	-	10	10
30	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	հատ	-	45	55
31	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	հատ	20	20	20
32	ՓՏ-ի հավաքածուի փոխարինում	հատ	30	30	30
			60	40	50

34	ՓՏ-ի քանդում,արատավորում, հավաքում	հատ	30	30	30
35	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	հատ	10	10	10
36	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	հատ	10	10	10
37	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	հատ	10	10	10
38	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	հատ	10	10	10
39	ՓՏ-ի յուղի փոխարինում	հատ	15	3	10
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ				
40	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	-	-	40
41	**6. Առջևի և հետևի կամրջակներ**				
42	Կամրջակի յուղի փոխարինում	հատ	4	4	4
43	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	-	-	40
44	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	հատ	-	-	40
	7. Կախոց				
45	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	12	15	20
46	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	12	10	50
47	Առջևի զսպանակի փոխարինում	հատ	10	10	10
48	Գնդե հոդակապի փոխարինում	հատ	10	10	10
49	Հետևի զսպանակների փոխարինում	հատ	8	8	8
50	Գնդավորի փոխարինում	C^3n	5	5	5
51	առջևի կոճղակի փոխարինում	լրակազմ	4	4	4
52	հետևի կոճղակի փոխարինում	լրակազմ	4	4	4
53	Շարժիչի փոկի և ռոլիկի փոխարինում	լրակազմ	40	40	40

56	Ստոյկայի կարգավորիչի փոխարինում	հատ	4	4	4
57	առջևի ափսեի փոխարինում	հատ	7	7	7
58	շարժիչի բարձիկի փոխարինում	հատ	10	10	10
59	փոխանցման տուփի բարձիկի փոխարինում	հատ	15	15	15
60	Հարվածամեղմիչի փոխարինում	հատ	10	10	10
61	Հարվածամեղմիչի սայլե բլոկների փոխարինում	հատ	10	10	10
62	Թևերի փոխարինում	հատ	15	15	15
	8. Ղեկային մեխանիզմ				
63	Ղեկասյունակի(ՍՏսՏվՍՈ) հիմնական նորոգում,	հատ	70	70	70
64	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	հատ	25	25	25
	9. Արգելակային համակարգ				
65	Վակումային ուժեղարարի փոխարինում	հատ	15	15	15
66	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	6	6	6
67	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	10	5	10
68	Առջևի սուպպորտի վերանորոգում	հատ	6	6	6
69	Սկավառակային կոճղակների փոխարինում	1 կ-տ	4	4	4
70	Թմբուկային կոճղակների փոխարինում	1 կ-տ	-	5	10
71	Առջևի արգելակային սկավառակների հղկում	հատ	5	5	5
	10. Էլեկտրասարքավորում				
72	Գեներատորի հանում,տեղադրում կամ փոխարինում	հատ	8	8	8
73	Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում	հատ	8	8	8
74	Գեներատորի ստատորի փոխարինում	հատ	8	8	8
75	Գեներատորի ռոտորի փոխարինում	հատ	12	12	12

76	Գեներատորի դիոդային կամրջակի փոխարինում	հատ	5	5	5
77	Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում	հատ	8	8	8
78	Մեկնարկիչի հանում և տեղադրում		20	10	20
79	Մեկնարկիչի խարիսխի փոխարինում	հատ	5	5	5
80	Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում	հատ	5	5	5
81	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	հատ	5	5	5
82	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	1 կ-տ	5	5	5
83	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	հատ	6	5	6
84	Վառոցքի կոճի հանում և տեղադրում	հատ	1	1	1
85	Ապակելվացիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	1	1	1
86	Էլեկտրական տվիչների փոխարինում	հատ	5	5	5
	12. Այլ ծառայություններ				
87	Առջևի կամ հետևի անվաբացքի կարգավորում	հատ	10	7	10
88	Անվադողի վերանորոգում	հատ	2	2	2
89	Անվադողի փոխարինում հանում տեղադրումով	հատ	2	2	2
90	Անիվի բալանսավորում	հատ	1	1	1
	Ընթացիկ,միջին և հիմնական նորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի,նյութերի և այլ օժանդակ նյութերի անվանումները				
	1.ՇԱՐԺԻՉ				
91	Բարձիկ	հատ	35	35	35
92	Շարժիչի գլխիկի միջադիր	հատ	20	20	20
93	Շարժիչի միջադիրների կոմպլեկտ	1 կ-տ	40	40	40
94	Շարժիչի փական դուրս մղող	հատ	10	10	10
95	Շարժիչի փական ներս մղող	հատ	10	10	10
96	Ծնկաձև լիսեռ	հատ	5	5	5
97	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	1 կ-տ	35	35	35
	Ծնկաձև լիսեռի				

99	Մխոց	հատ	68	68	68
100	Մխոցային օղակներ	1 կ-տ	40	40	40
101	Մխոցային մատ	հատ	20	20	20
102	Շարժիչի առջևի կափարիչ	հատ	10	10	10
103	Շարժիչի վերևի կափարիչ	հատ	10	10	10
104	Թափանիվ	հատ	15	15	15
105	Շարժաթև	հատ	25	25	25
106	Ատամնանիվ բաշխիչ լիսեռի	հատ	15	15	15
107	Ատամնանիվ ծնկաձև լիսեռի	հատ	15	15	15
108	Շարժիչի ատամնավոր փոկ	հատ	30	30	30
109	Յուղի մղիչ	հատ	30	30	30
110	Միջադիր յուղի մղիչի	հատ	5	5	5
111	Գլխիկի միջադիր	հատ	5	5	5
112	Թափանիվի առանցքակալ	հատ	15	15	15
113	Վենեց	հատ	15	15	15
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ				
114	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	լիտր	3	3	3
115	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	լիտր	5	5	5
116	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	լիտր	7	7	7
117	Յուղի զտիչ	հատ	5	5	5
118	Վառոցքի կոճ	հատ	30	30	30
119	Վառոցքի մոմ	հատ	5	5	5
120	Օդի զտիչ	հատ	7	7	7
121	Ջրի տվիչ	հատ	15	15	15
122	Վառելիքի զտիչ /փոքր/	հատ	17	17	17
123	Կարբյուրատոր	հատ	-	-	-
	3. Սառեցման և արտածման համակարգ				
124	Ռադիատոր	հատ	55	55	55
125	Թերմոստատ	հատ	10	10	10
126	Ջրի մղիչ	հատ	30	30	30
	4. Կցորդում և ՓՏ				
127	Կցորդման աշխատանքային գլան	հատ	-	30	30
128	Կցորդման գլխավոր գլան	հատ	-	30	30
129	Կցորդման սեղմող սկավառակ	հատ	-	50	50
130	Կցորդման տարվող սկավառակ	հատ	-	20	20
131	ՓՏ-ի առաջնային լիսեռ	հատ	-	12	12
132	ՓՏ-ի երկրորդային լիսեռ	հատ	-	15	15

134	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	1 կ-տ	50	30	30
135	Կցորդման եղան	հատ	-	30	30
136	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ				
137	Կարդանային լիսեռի խաչուկ	հատ	-	-	15
	6. Առջևի և հետևի կամրջակներ				
138	Ռեդուկտոր	հատ	-	-	50
139	Կիսասռնի	հատ	1	1	1
140	Կիսասռնու առանցքակալ	հատ	20	20	-
141	Առջևի կամրջակի կիսասռնու գնդային հոդակապ կարճ	հատ	4	4	4
142	Տրանսմիսյոն յուղ 1լ	լիտր	8	8	8
	7. Կախոց				
143	Անվակունդ	հատ	45	45	50
144	Հետևի անվակունդի առանցքակալ	հատ	50	50	50
145	Զսպանակ	հատ	1	1	10
146	Առջևի հարվածամեղմիչ	հատ	60	60	60
147	Գնդե հոդակապ	հատ	20	15	20
148	Հետևի զսպանակ	հատ	20	20	-
149	Ճոճանակային լծակ	հատ	35	30	35
150	Զսպակ (ռեսսորա)	հատ	-	-	50
151	Գնդավոր	հատ	15	15	15
152	Կոճղակ առջևի	լ ր ակ ազ մ	18	18	18
153	Կոճղակ հետևի	լ ր ակ ազ մ	18	18	18
154	Շարժիչի փոկ ռոլիկով	լ ր ակ ազ մ	90	90	90
155	Փոկի ռոլիկ	հատ	30	30	30
156	Տյագա	հատ	16	16	16
157	Ստոյկա կարգավորիչ	հատ	12	12	12
158	Ափսե առջևի	հատ	32	32	32
159	Բարձիկ շարժիչի	հատ	25	25	25
160	Բարձիկ փոխանցման տուփի	հատ	23	23	23
161	Հարվածամեղմիչ	հատ	40	40	40
162	Հարվածամեղմիչի սայլե բլոկներ	հատ	30	30	30
163	Թևեր	հատ	45	45	45
	8. Ղեկային մեխանիզմ				
164	Ղեկային կալունի վերանորոգման կոմպլեկտ	1 կ-տ	40	40	40
	9. Արգելակային համակարգ				
165	Գլխ. գլան	հատ	50	50	50

167	Վակուումային ուժեղարար	հատ	50	50	50
168	Առջևի արգելակային սկավառակ	հատ	40	40	40
169	Հետևի արգելակային թմբուկներ	հատ	50	50	50
	10. էլեկտրասարքավորում				
170	Գեներատոր	հատ	20	20	20
171	Գեներատորի դիոդային կամրջակ	հատ	12	12	12
172	Գեներատորի ռելե	հատ	25	25	25
173	Գեներատորի խարիսխ	հատ	10	10	10
174	Գեներատորի փաթույթ	հատ	10	10	10
175	Ստարտեր	հատ	75	75	75
176	Ստարտերի ածուխ	1 կ-տ	20	20	20
177	Մենարկիչի խարիսխ	հատ	1	1	1
178	Բենդեքս	հատ	20	20	20
179	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	հատ	30	30	30
180	Ապակեմաքրիչ	հատ	5	5	5
181	Բռնկման կողպեք	հատ	100	100	100
182	Տրամբլիոր հպակով	հատ	15	15	15
183	Տրամբլիոր էլեկտրական	հատ	25	25	25
184	Ապակելվացիչի շարժիչ	հատ	20	20	20
	Ընդամենը		3,380	3,501	3,902
	Առավելագույն գների հանրագումար				10,783

ԳՆՈՐԴ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

Գլխ. տնօրեն----------Ա. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 1510012745550100
ՀՎՀՀ 00873228

Տնօրեն----------Ա. Լալայան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«22» 08 2019թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/99 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում
1	50111110	*Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ*	Հանձնման ընդունման արձանագրության երկկողմ հաստատման օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում

ԳՆՈՐԴ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

Գլխ. տնօրեն----------Ս. Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 1510012745550100
ՀՎՀՀ 00873228

Տնօրեն----------Ա. Լալայան
/ստորագրություն/
Կ.Տ

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵԿ» ՓԲԸ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/99 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/99 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՎ» ՓԲԸ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԲԱԺԻՆ